ԹՈՐՈՍ ԹԱՌԼԱՆԵԱՆ.

ՍՐՏԻ ԽՕՍՔԵՐ

ՄՈՍԿՈՒԱ.
ՏՊԱՐԱՆ ՄԿՐՏԻՉ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ.
1892
(39)

Սերեբ
304

2003

2003

Սերեր
304

ԹՈՐՈՍ ԹԱՌԼԱՆԵԱՆ.

ՍՐՏԻ ԽՕՍՔԵՐ

ՄՈՍԿՈՒԱ.
ՏՊԱՐԱՆ ՄԿՐՏԻՉ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ.
1892

2354

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 24 Января 1892 года.

304-2003
(4272 41)
Lf 303

Типографія М. Бархударянъ, Москва, Мясницкая, д. наслѣд. Ананова.

ՆԵՐԵՍԳԵՏԻՆ

Թող եռայ ծովը.—կատաղած ալիք
Քո թեթև նաւը թող շրջել չանայ,
Ծիծղայ բորեաս.—հողմերն ու մրրիկ
Թող սպառնան անել նաւդ տակնուվրայ.
Դու չ՝վհատես, նաւ՝պետ անվեհեր,
Եւ կողմնացոյցը ձեռքումդ հանգիստ,
Կոծ ու կականին ծովի անտարբեր,
Ղեկը միշտ ուղղեր դէպ՝ նաւահանգիստ:

Թէ այս մրրիկից ծակամուտ եղած
Նաւաստիները երկչոտ, թուլամորթ
Քեզ մահ սպառնան ձեռքերով դեղնած,
Որ դու յետ դառնաս, ով վեհանձն լոզրրդ,

Այնժամ դու ցոյց տուր կոյրերին միայն
Լոյսի մէջ կորած կայտառ օթևան—
Ուր պիտի տանես—ու քաջ, անսասան
Ընթացիր դէպ՝ այն պայծառ լիջևան։

Բայց թէ այս չնչին պարագաներից
Ընկճուեց հոգիդ, սոսկաց քո անձը,
Եւ վայր ձգեցիր դողահար ձեռքից
Քո կողմնացոյցը,—կորա՜ւ քո դանձը. . .
Այնժամ պարտըկիր քեզ ծովի խորքում,
Որ Աստուածանից քեզ տուած քանքար,
Այն ծառայի պէս, թաղեցիր հողում—
Նաւը մատնեցիր վտանգի հպար։

* * *

Երբ քեզ տան լուր, մայր իմ անոյշ.
«Գնաց որդիդ մարտի դաշտ՝
«Կռուի յանուն ազատութեան
«Նրա թշնամեաց դէմ անհաշտ»,
Զ'լաս, մայրիկ իմ նազելի,
Այլ մատներովդ հիւսիր
Դափնիներից շքեղ պսակ,
Եւ նոր լուրի սպասիր։
Երբ տան քեզ, մայր իմ սիրելի,
Նորից մի լուր. «Քո որդին
Գնտակահար ընկաւ մարտում,
Հաւատարիմ իւր ուխտին»,
Մի՛ լար, մայրիկ իմ թանգագին.
Դափնիներով պսակիր
Այնժամ ճակատ քո մայրական.
Այնպէս որդի ծնեցիր։
Բայց երբ լսես, մայր կաթողին,
Որ քո որդին վեղ ձկեց,

Իւր սուրբ ուխտը նա մոռացաւ,
Սուրը ձեռքից վայր ձգեց.
Կամ թէ փառքից շուտ շլացած,
Փառք ու պատիւ նա ուզից,
Իւր շահերին, իւր նենգ «ես»ին
Գաղափարը զոհ բերեց,
Այնժամ միայն, անբազդ մայրիկ,
Դու լաց եղար, մոր սուգ,
Որ ծնեցիր և զգուեցիր
Կրծքիդ վերայ մի սարուկ։

15 հոկտեմբ. 90 թ.
Մոսկւա.

* * *

Աղնիւ ընկեր, շատ բարի ես.
Պարտք ունէի ահագին,
Քո զրպանից պարտքիս կէսը
Համարեցիր հրէային։

Երբ իմ խելքը տատանւում էր.—
Զէր հաւատում ոչնչին,
Դու էլ ինձ հետ միշտ լաց եղար,
Որ կեանքն երազ է ընչին։

Բայց ես հիմայ նոր ցաւ ունեմ—
Հիւանդ եմ սև աչքերից. . .
'Ի սէր Աստծոյ, կուզես լինել
Այդ ցաւիս էլ մասնակից։

Ա՜խ, թող պարտքը բուկս խեղդէ,
Խելքս սէրն էլ ուրանայ,
Բայց... բայց դարձեալ թող նոր ցաւը
Մէկ իմ սրտին ծանրանայ։

18 յունիսի 91 թ.
Մոսկւա.

* * *

Անհոգ, անդարդ մանկան նման,
Տարուած միայն քեզանով,
Կաչես դէմքիդ այդ աննման
Հայելու մէջ ժամերով։

Բայց, ախ, ինչո՞ւ, կեանքիս հատոր,
Իմ խնդիրքը չես լսում.
Հայելիդ թողած, ինչո՞ւ մի օր
Նայել սրտիս չես ուզում։

Զէ՞, այնտեղ էլ դու կ'տեսնես
Քո պատկերը միայնակ,
Շուրջը տանջանք, ցաւեր պէս-պէս—
Քեզ հաճելի շրջանակ։

21 օգոստոսի 91 թ.
Մոսկուա.

* * *

Քո աննման երկու յօնքդ
Մի աղեղն են հրաշալի,
Իսկ աչքերիդ ճաճանչները—
Նետե՞ր, նետե՞ր շանթալի։

Այդպէս ղինուած վերմոս կուռաս.
Թնայիր ինձ, օրիորդ,
Դու սեսնում ես, ոչինչ չունեմ,
Ոչ մի զրահ սրտիս մօտ։

Ա՜հ, աչքերդ հպարտութեամբ
Մինչ փակեցիր, որ բանաս,
Նոցա շանթի լոկ շորշոփով
Տես, մնաց ընկայ զարկուած։

10 սեպտեմբ. 91 թ.
Մոսկուա.

ՎԱՐԴ ՔԱՂՈՂՆԵՐ

—Աղջի՛ ջան, աղջի՛, այդ ո՞ւր ես գնում,
Ո՞ւր ես շտապում։
—Գնում եմ այգի, անծանօթ ախպէր,
Որ քաղեմ վարդեր։
—Աղջի՛ ջան, աղջի՛, վարդն ի՞նչ պիտ՝ անես,
Ո՞ւմ պիտի տանես։
—Վարդը կ՝քաղեմ, կ՝տանեմ եարիս.
Դու ո՞ւր ես գալիս։
—Քո մօտ եմ գալիս, մեռնեմ անուշիդ,
Վարդ քաղեմ եարիդ։
—Անծանօթ ախպէր, քո քաղած բարին
Պէտք չէ իմ եարին։
—Խիստ պէտք է, հոգիս, այդ չ՝գիտես դու,
Այդ ինձնից հարցրու։
—Դէ, որ այդպէս է, հակառակ գնա.
Այստեղ վարդ չ՝կայ։
—Կա՛յ, սիրուն աղջիկ, վարդը իմ ուզած
Այսպէս է բուսած։

7 սեպտեմբ. 91 թ.
Մոսկւա.

* * *

Երբ նայում ես իմ աչքերին,
Աստղ ու լուսնեակ ես ինձ համար.
Երբ ժպտում ես ինձ, եար անգին,
Լոյս-արեգակ ես ինձ համար։
Իսկ երբ ասում ես ինձ դու «եա՜ր»,
Ամբողջ երկինքն ես ինձ համար։

15 սեպտեմբ. 91 թ.
Մոսկւա.

ԷՐԵԳԱԿ

Ինչո՞ւ ես տխրում, անգին սիրելիս,
Փայլուն արևի միշտ մայր մանելիս.
Թէ՞ շփոթում է քեզ միտքը ծածուկ,
Որ մեր արևն էլ է խիստ վաղանցուկ։

Թո՜ղ... այդ դարդի դէմ հնար ասեմ քեզ.—
Հոգիս, գոնէ այդ լսիր վերջապէս—
Տապաւած սրտիս մէջ մի՛ սիրիր խաւար.—
Եւ միշտ մեզ մնա է արև լուսավառ։

5 Նոյեմբերի 91 Թ.
Մոսկուա.

ՇՈՒՇԱՆԻՆ

Օդ ու կեանք ես դու ինձ համար.
Վերածնում ես ինձ, Շուշան,
Իսկ քեզ մահ է, մահ անհամար
Տեսքս, գիտեմ, սիրական։

Բայց ոչ ես եմ մանուկ այնքան՝
Ցանկամ օրս դեռահաս,
Ոչ դու պառաւ, ծաղկող շուշան,
Որ մեզանից հեռանաս։

Էլ ծայրերից ինչո՞ւ բռնենք.
Խաչ, եկ իջնենք քիչ-քիչ վայր.—
Եւ, տես, ինչպէս շուտ կ՚լինենք
Օրինաւոր կին և այր։

19 Նոյեմբ. 91 Թ.
Մոսկուա.

ԵՐԱՆԵԱԿԻՆ

Հիմա դաշտում կ'երգէ քամին
Վերաս տխուր եղանակ,
Եւ ոչ տան մէջ իւր մեղեդին
Սիրած մայրս, Երանեակ։

Հա, չի փակէ ձեռքն հոգատար
Աչքս մարած և անկեանք,
Ազատն անվախ ու անդադար
Այն կ'կոչէ, Երանեակ։

Բայց կ'զողմ, մարդարտի պէս
Աչքիդ կաթիլ միայնակ,
Թէ քեզ տեսնող աչքերն այսպէս
Պատիժ առնեն, Երանեակ։

19 Նոյեմբ. 91 Թ.
Մոսկւա.

ԵՐԱՆԵԱԿԻՆ

Առուի մէջ երկու ալիք են վազում
Արագ և անձայն.
Մէկը միւսին հասնել է ուզում՝
Խառնուի նորան։
Բայց քանի մէկը, գիրկը բաց արած,
Առաջ է գալիս,
Կարծես ծիծղալով, միւսը յանկարծ
Ցորձանք է տալիս.
Ցորձանք է տալիս, հասնում գետափին...
Եւ էլ չի զգում,
Որ միւսն արդէն դիպաւ քարափին՝
Փշրուեց իսկոյն։
Ախ, իմ նազելի, ալիքի ծնունդ,
Մի՞թէ դու նոյնպէս
Ինձանից, ինչպէս Տանտալից սնունդ,
Պիտի միշտ փախչես։
Մի՞թէ մինչ Լեսա դեռ հասնելներս
Ինձ պիտ՝ չ'նայես,
Եւ իմ այս մատաղ կեանքս ու յոյսերս
Պիտ՝ չխնայես։

2 Նոյեմբ. 91 Թ.
Մոսկւա.

* * *

Թող սա փայլուն ոսկի դիզէ,
Որ ճոխ ապրուստ ունենայ.
Նա հզօրի ձեռքը լիզէ,
Որ իւր հացը ստանայ.

Ես կ'երգեմ պայծառ անուշդ,
Ով իմ սիրուն սիրական,
Քանի կուտայ ինձի սնուշդ
Շրթունքներիդ մանանան։

23 Նոյեմբ. 91 Թ.
Մոսկուա.

252 304.2003
4272/41

* * *

Ոչ, ժամանակն է, թող շառաչելով
Ընկնեն դերիի ձեռքի շղթաներ.
Փլէ՛ն բանտերը, ուր հառաչելով
Լսեց նա նզովք, կամ հրամաններ։

—Բայց դու, սիրուհիս, խօսքիս մի՛ նայիր,
Այլ ձեռքս հիւսովդ ամուր շղթայիր,
Եւ ինձ բանտարկիր յաւիտեան քո մօտ
Եւ տուր հրաման մինչև առաւօտ։

24 Նոյեմբ. 91 Թ.
Մոսկուա.

ՀԱՅԿ-ՍՕՐ
Գ. Ա. Մանասեան

* * *

Շատ ես խաղցել իմ սրտի հետ, բայց այսպէս խաղալ
չի լինիլ.
Դարդ ու ցաւեր շատ ես տուել, բայց այսպէս ցաւ տալ
չի լինիլ.
Եար, աչքերիս լոյսը մարաւ. արցունքի տեղ արիւն կուլամ.
Շատ եմ լացել ես քո ձեռքից՝ այսպէս սրտանց լալ
չի լինիլ։

Երբ քեզ տեսայ, ղարդ, կուլայի պարզ ու անուշ
գիշերներով,
Դաղլաճ սրտիս ցաւի համար սիրած սազիս գանգատելով,
Ղարդ՝ լաց եղայ, երբ տեսցիր ինձ այն պաչը փայփայելով.
Հիմա ուրիշ տեսակ կուլամ, այսպէս սրտանց լալ չի լինիլ։

Դու ինձ թողիր և պատկերդ սրտէս տարար, ա՛յ գեղեցիկ,
Է՞ր չ՚տարար սիրտս արմատով, որ լալիս եմ մաղիկ-մաղիկ,
Որ պիտ՚ պոկեմ սազիս թելը, որ պիտ՚ ընկնեմ սարն
անառիկ.—
Բանտ է տունս առանց քեզի, այնտեղ սրտանց լալ չի
լինիլ։

30 նոյեմբ. 91 թ.
Մոսկւա.

ՊՕԷՏԻՆ

Երբ կեղեքում են սիրտդ դառնապէս
Նորան լաւ ծանօթ ցաւերը պէս-պէս,
Դու այդ ցաւերից երգեր ես հիւսում,
Եւ քո հեգ սրտից հանգիստ ես ուզում։

Բայց վիճակւած չէ հանգիստ քեզ, քերթող.
Զգայուն է սիրտդ՝ դարդը մշտական.—
Եւ սպառել ջուրն ակներից բղխող
Կարող է արդիօք բաժակը մանկան։

3 դեկտեմբ. 91 թ.
Մոսկւա.

* * *

Եար, քեզ հետ խօսելիք ունեմ, խօսքիդ քաղցրութեանը մատաղ,
Քո ձեռքից փնաս եմ քաշել, ձեռքիդ քնքշութեանը մատաղ,
Ինչպէս մի ծորտ իւր տիրոջից, քեզանից դատ եմ պահանջում.
Դէ, դատ արա սիրահարիս, դատիդ արդարութեանը մատաղ։

Մաքերիս մէջ թագ ունէի հաղար ու մի թագաւորի,
Երազիս մէջ՝ հարիւրներով ծովից ելած սիրուն հուրի.
Հիմա ոչ ոք են. կարծես, մէկից, մի շարժումով քո մատների
Դուրս արեցիր նոցա սրտէս, մատիդ նրբութեանը մատաղ։

Նոցա տեղը սիրաս դրիր քո պատկերը, ա՛յ սիրահար,
Բայց, ախ, այնքան թագ ու հուրին այսքան հոգս ու ցաւ երբ կուտար.
Սիրաս դարդից խոց է կորել, պառկած եմ դժար ցաւագար,
Դեղ արա ինձ արդար դատով, դատիդ զթութեանը մատաղ։

3 դեկտեմբերի 1891 թ.
Մոսկւա.

ՀԱՑ ԱՂՋԿԱՆ

Ինչպէս նռան հատիկը մօտը վառուող ճրագից,
Վառւում է քո շրթունքը սիրտդ լցնող կրակից,
Շանթ ու կայծեր են թափւում սև աչքերիդ հայեացքից,
Ինչպէս խուրձեր նետերի մութ երկնքի փայլակից։

Ախար ի՞նչն է, հայ աղջիկ, քո սրտիկը կրակել.
Սէրը ես տենչում, թէ՞, զուցէ նոյնիսկ սիրուց ես խաբւել.
Ոնց էլ լինի, հրեշտակ, ինձնից խորհուրդ հարցրու.
Խորհուրդս այս է. յուզմունքդ շուտ ինձ վերայ պարպեցրու։

Թէ պիտ՝ սիրես, տուր ուրեմն ինձ մի համբոյր հրաշալի,
Ցետոյ, արդէն դո՛ւ դիտես, զարկ հայեացքով շանթալի.
Թէ խաբւել ես, զարկ կրկին, մատաղ արա քո կեանքին,
Միայն... յետոյ տուր մի պաչ իմ կիսամեռ շրթունքին։

3 դեկտեմբ. 1891 թ.
Մոսկւա.

ԹԱՌԱՄԱԾ ՎԱՐԴԵՐ

Իմ խամրած վարդեր, թառամած վարդեր,
Իմ տխուր վէպի դեղնափայլ թերթեր,
Օհ, բալասաններ սրտիս ցաւագար,
Ինչքան դուք թանդ էք որբուկիս համար։

Ձեզ իւր ձեռքերով նա թփից քաղեց,
Իւր ճոխ մազերը զարդարեց ձեզմով,
Եւ, ա՜խ, իրանից ձեզ միայն թողեց,
Վերջին հրաժեշտը ինձ մրմնջալով։

Մի՛ չորնաք ուրեմն, իմ խամրած վարդեր,
Քանի ցող կուտան ձեզ իմ արցունքներ,
Քանի գգւում են, զեփիւռի տեղակ,
Ձեզ իմ համբոյրը և ցածր հառաչանք։

6 դեկտեմբ. 1891 թ.
Մոսկւա.

* * *

Աշխարհիս մէջ չթողեցի
Իսոր թէ ծանծաղ և մի հոր,
Ուր անհանդիստ չպտռեցի
Ճշմարտութիւնն, բայց 'ի զուր...

Վա՜յ անգէտիս, հէնց սկզբից
Սատ, ի՞նչպէս չ'տեսայ,
Որ, եա՜ր, այտիդ նենգ փոսիկից
Նա ժպտում է իմ վերայ։

17 դեկտեմբ. 1891 թ.
Մոսկւա.

ԱՐԵՏԻՍ

«Հայե՛ր, հայե՛ր, բարի լոյս ձեզ.
Լոյսի նման անընման
Ազատութիւնն, հաշտուած ձեզ հետ,
Կ'երթայ Ցաճկահայաստան»։

Սիրտս թնդայ... այդ ուղի՞ղ է.—
Բայց դա ձայն էր ազգարար.
Իմ հայրենի՛ք, ծոցդ եմ թռչում,
Ազատութեան սիրահար։

Մի թռիչքով ահա թռայ
Գլխից մռայլ Կովկասի,
Կուրից, ինչպէս Վարազդատը,
Մի շարժումով ցատկեցի։

Ահա ծոցդ եմ. սաստիկ դազրած
Ես վազում եմ դէպ՝ Մասիս,
Որ տամ, մայրիկ իմ Հայաստան,
Քեզ առաջինն աւետիս։

Շունչս բերնիս, մազլցեցի
Արարատի գագաթին,
Եւ տեսնում եմ.—ահա... կերթայ...
«Ազատ ես մայր թանգագին»։

Եւ, շլացած Ազատութեան
Ջեռքում վառուող կանթեղից,
Փռայ նորա ոտքերի տակ
Արարատի գագաթից։

18 յուլիսի 91 թ.
Մոսկուա.

ՄՇԵՑՈՑ ԵՐԳԸ

Ցիսուն տասնեակ մեզ տանջեցին,
Անարգեցին դառնապէս.
Մեր սուրբ հողից, մեր գրախտից
Մեզ քշեցին օձի պէս։

Մեզ հասցրած հարուածներից
Մեր սրտերը քարացան,
Եւ սողացինք մենք, լեզելով
Մեզ հարուածող խարազանն։

Բայց չ՚մեռանք.—չէինք մոռցել
Ազգու խօսքը քաջերի,
Որը այնպէս ուժգին թնդաց
Մօտ Տղմուտի ափերի։

Հիմա եղբարք, բաւ չէ՞ սողալ,
Երբ հասաւ մեր բկերին—
Ելէք մէկից ոտքի կանգնենք
Եւ ցոյց տանք ողջ աշխարհին,

Թէ ինչ ունենք մենք դեռ պահած
Վարդաններից յիշատակ
Այսքան տարի, օձի նման,
Մեր համր ու լուռ լեզուի տակ։

10 *օգոստոսի* 91 *թ.*
Մոսկւա.

ՄՏԱԾՄՈՒՆՔՆԵՐ ԸՆԻՒ ԷԻԵՐԱԿՆԵՐԻ ՄՈՏ

Կանգնած եմ տխուր, լուռ ու վշտագին
Մեռած քաղաքի մի աւերակին.
Լուռ է նորա մօտ, ինչպէս շիրիմի,
Որ վաղուց իրան ծուխ գնող չունի:

Մթնած աչքերով իմ շուրջն եմ նայում.
Ահա մի մեծ սալ, ահա մի սև պատ,
Փլատակ եղած մի ժամ այս կողմում,
Այնտեղ կոր եկած մի վանք մամռապատ...

Ահա արքունին այն հսկաների,
Որ խաչի համար երկ՝հարիւր տարի
Մենակ, բայց անահ առիւծների պէս
Հազարների դէմ ելան ասպարէզ:

Ահա տաճարը... Մայր եկեղեցին...
Ահ, սորա հիմքով նոքա միասին
Խարդախ յոյնի հետ ընդ միշտ ուխտեցին
Մէկտեղ անկանիլ դառը օրհասին:

Եւ անկաւ հայը... բայց այնժամ անկաւ,
Երբ նորա մարմնում վէրքերից անբաւ
Արիւն չ՝մնաց գետին թափելու,
Ողջ տեղ չ՝մնաց նոր վէրք առնելու:

Հոյակապ վանքեր, դուք եղէք վկան,
Թէ ինչ բարձր կեանք, ինչ ոյժ կենսական
Ջոհ բերին հայերն, երբ անշունչ անկան,
Որ փրկեն մաքերն, որ ձեզ ոյժ կուտան:

Իսկ Բիւզանդիան... մի հողմ դառնաշունչ
Ցանկարծ բարձրացաւ քաղքում անտերունչ.
Թաղաւորի պէս, արձակ-համարձակ
Նա վանքը մտաւ անվախ, սանձարձակ:

Աւլեց այնտեղից աւազն ու փոշին,
Շինեց բարձր սիւն սակաւ առ սակաւ
Եւ յանկարծ հանեց այն գէպի երկին,
Աստուծոյ դատին, կարծես, փաստ տարաւ:

Օհ, հողմ, խեղի պէս մոլեգնիր, կատղիր
Եւ իրար խառնիր երկինքն ու երկիր,
Եւ, թէ կարող ես, բուիր ողջ Անին,
Տար Նոյա ահեղ, մեծ դատաստանին։

Թող Նա դատ անէ, թէ ինչ դատ արաւ
Գլխին պսակուած հազար խաչերով
Խաչի բարեկամն նենգ, արիւնծարաւ...
Թէ Նա էլ չարաւ... հայն էր մեղաւոր։

15 օգոստոսի 19 Թ.
Մոսկուա.

* * *

Մինչ կ'հեծէ հայրենիքս վատ լծի տակ դերութեան,
Ինձի չ'կայ կանաչ կաղանդ, կարմիր զատիկ, բարկենդան.
Որի ձեռքից խլել են թանդ զանձերի հետ բիւրաւոր
Եւ կեանք տուող հայրենիքը, նորա ի՞նչը «շնորհաւոր»։

Բայց երբ հնչէ մարտի փողը—աղատ կենաց կարապետ—
Այնժամ, այնժամ կ'դան ինձի կաղանդ, զատիկ իրար հետ.
Ուրախ-ուրախ ես կ'վազեմ, բարձր երդելով «աւետիս»,
Եւ կ'ներկեմ զատկի ներկով դերեւած հողը պապերիս։

Եւ երբ աղատ հայրենիքիս հողի վերայ կ'բուսնի
Իմ արիւնով ջրուած-սնուած, կարմիճի փառք, գեղ դափնի,
Բաց ճակատս պսակելով դափնիներով նորանոր,
Եղբայրներս ինձի կ'ասեն. «կարմիճ, մահդ շնորհաւոր»։

7 սեպտեմբ. 91 Թ.
Մոսկուա.

ՃՈՐՈԽԻ ԱՌԱՒՕՏԸ

Ծէգծէգում է պսպղալով
Արևելքում արեգակ,
Կարծես, երկնից սրսկում են
Գոհարների բարակ ցայտ։

Ահա արդէն Ծիրանեգոյն
Ամպի տակից դուրս ցոլաց
Նորա ոսկի կարապետը
Եւ Ճորոխի մէջ խաղաց։

Դիպաւ ափի ծաղիկներին,
Որ պաղ ցողով լւացուած,
Մաքուր-մաքուր, արդէն վաղուց
Վեր կաչէին գրկաբաց։

Պարզ ու պայծառ փայլփլեցին
Նոքա դեռի ափերին
Եւ շուտ իրանց գրկերն առան
Փոփոխամիտ թիթեռին։

Օգոստոս. 91 Թ.
Մոսկուա.

ՔԵԱՆԴԱՐ.

ՊՕԷՄԱ

ԵՐԳ ԱՌԱՋԻՆ.

Արդեօք ովքեր են յանդգնում այսօր
Վարոս-Թադոսի քունը դարեւոր
Խանգարել այսպէս. ովքեր են, ովքեր
Աղմկում այսօր վանքը Վարդիհէր*),
Քանի որ վաղուց նորա կամարներ
Զեն թնդացնում էլ շարականներ։
Օրն է այսօր սուրբ Վարդիհէրի,
Եւ հայն է եկել Վարդիհէր «դէրի»։

*) Վարդիհէր վանքը գտնւում է Կաղզւանից ոչ հեռու։ Տարւայ մէջ երեք օր կայ, երբ ամեն կողմից հաւաքւում են այնտեղ բազմաթիւ հայ ուխտաւորներ։

Հայ, որ նվիրված ես զեղխությիններին,
Դու չես հասկանայ, թէ ինչ է «դէրին»,
Թէ ինչ քաղցրություն ունի նա իւր մէջ
Գիւղացու համար ճնշված ու խեղճ:
Վշտին ու ցաւին տխուր օրերի,
Հոգսին ու դարդին յամր ամիսների
Այստեղ է գտնում միակ սփոփանք
Եւ յոյսի աղբիւր գեղջուկն հասարակ.
Եւ երգում է նա.—և ցաւը կրծքից
Տաղի խօսքի հետ կորչում է մէկից,
Եւ պարում է նա.—վաստակած մարմնին
Տալիս է նոր ոյժ թռիչքը ուժգին.
Թափւում է ժանգը երեսից նորա,
Մաքրւում խորշոմն ճակատի վերայ.
Եւ գնում է նա ուրախ, բախտաւոր
Սրբի խորանը մաքուր ուխտաւոր.
Եւ այնտեղ, չոքած սրբի առաջին,
Ճակատը դեռնին, արցունքը աչքին,
Իւր սրտի ցաւը—վէրքը սեւացած
Նորան համարձակ նա անում է բաց.—
Կորչում է ցաւը սրտից վերաւոր
Եւ տեղ է տալիս յոյսի բիւրաւոր.
Գնում է գեղջուկն նորացած, զւարթ
Դէպ՝ իւր գերանդին, դէպի մայրը—արտ:
Վարոս-Թադոսի սիրովը վառւած,
Հոգին փրկելու մաքերով տարւած,

Հեռուից եկել են սուրբ Վարդիհէր
Եւ մատաղ հարսներ, և մանուկ ու ծեր:
Ահա, ահագին փափախը գլխին,
Կանգնած է առատ Շիրակի որդին.
Ահա Թիկնաւէտ, քաջ և ընդունակ,
Խանչալը գոտին ամեն ժամանակ,
Սիրուն Փամբակի որդին լեզուանի.
Ահա պատանիք և կաղզւանի.
Ահա գեղեցիկ, թարմ ինչպէս գարուն,
Ախալցխայեցի հարսները սիրուն:
Վանքի առաջի տարածութիւնը
Ուխտաւորների այս բազմութիւնը
Սիպտակ վրանով է այսօր ծածկել,
Վրանների առաջ խարոյկներ վառել:
Թռչում է գլուխը տարեկան խոյի,
Մաս-մաս է լինում մարմինը ղոհի
Եւ, շամփուրների վերայ անցրած,
Նա դառնում է, ՀՀ, անոյշ խորոված...
Բայւեց տկճորը... քաղցր հիւթն հոսեց
Եւ խորոված ի ջրին խառնւեց. . .
Ամենայն պատառ և ամեն մի կում
Այս անմահական սև գինու փայլուն
Փողի ձայները սրտառուչ ու մեղմ
Անում են անչափ անուշ ու համեղ:
Ջահիլը, տաքցած հիւթերից անուշ,
Ջան-ջան կանչելով, մի փայլուն զուռուշ

Բուռն է տալիս ծանր զուռնաչուն,
Որ, ոգևորված, էլ զել է փչում։
Այն կողմը նստած հաստ-հաստ յօնքերով
Ծերը նայում է ջահիլին սիրով
Եւ իւր երջանիկ օրերն է յիշում,
«Հէյ վախ հէյ» կանչում, իւր պառ՝ւին աչում։
Բայց գնանք, գնանք աղջիկների մօտ.
Առանց աղջկայ և լոյսն է աղօտ։
Հնչում է սազը աշուղի ձեռքին
Եւ մատների մէջ իւր ամբողջ հոգին
Դնում է չեչոտ ջութակահարը.
Ահա սկսեց և կլօր պարը.
Ձեռք ձեռքի տալին չքնաղ, դիւրաթէք,
Նրբակազմ, փայլուն հայոց աղջկերք.
Գիշերուայ նման աչքեր սեւորեակ
Վառւում են նոցա թուխ յօնքերի տակ.
Այրւում են նոցա դէմքերն ու այտեր
Դողում են կրծքերն... լի—նոցա սրտեր։
Սև սաթ-մազերը բաժնած հիւսերի,
Թափւել են անկարգ նոցա ուսերի,
Կրծքերի վերայ. (շարժումից արագ
Բացւեցին հիւսերն պարի ժամանակ).
Հաշւած քայլերով, արագ, կամ հանդարտ,
(Պարից է կախւած), դէմքերը հպարտ,
Եւ ոստոստում են և շորորում են,
Եւ կարապի պէս յամր օրօրւում են,

Կամ կաքաւի պէս, քայլերով մանրիկ,
Տաղին համաձայն, սահում են մեղմիկ...
Բայց երբ այդ պարը յանկարծ «վեր-վերի»
Փոխում են մատներն կոյր աշուղների,
Հայ աղջիկները դառնում են կրակ,
Որ մխում-մխում է մի ժամանակ,
Բայց մէկ էլ յանկարծ դուրս է ձգում վեր
Բոցերի փնջեր, կրակէ վարդեր...
Կարծես թէ նոցա սրտերն են եռում
Կրծքում բաբախող և մարմինն այրում։
Ոտքերն հպլիւ հազ գետին են դիպչում։
Օդում են պարում, օդում են թռչում։
Կարծես հնագանդ մի կախարդական
Ծածուկ նշանի, թօթափել յական,
Գետնից թռչում է ամբողջ շրջանակ,
Գետին է իջնում միաժամանակ։
Ինչպէս չ՝թռչի այդ փակւած հուրին,
Երբ սպասել է այս երկար տարին
Միայն այս ժամին. համը դէրիի
Մէջն է կրակոտ, զարթ «վերվերի»։
Ջահիլ տղայքն էլ չ՝համբերեցին
Եւ շուտ պար մտան երգելով «եայլին»
Եւ պտրտեցին... բայց ոչ բոլորը.
Շատը, մէջերը առած տկՃորը,
Շրջապատել են և ականջ դնում
Աշուղ կողմերից եկած ծերունուն։

Պատմում է նոցա կամաց ու հանդարտ
Իւր երկրի բաներն ծերուկն ալեզարդ.
Եւ կալ ու կուտը, և իրանց տուած
Խարաճն ու տուրքը, և այն անասուած
Կապալառուի բռնութիւնները,
Վալի-փաշայի լրբութիւնները,
Եւ իրանց միակ տիրոջ պանծալի
Մշու Սուլթանի գործերն հրաշալի։
Շատը լսում են լարուած ու յուզուած,
Շատը կոնծում են աշխարհը մռայած,
Շատերի խելքն էլ, ծերունուն թողած,
Պարող կոյսով է միայն զբաղուած.
Ահա՛ Ջալալը, թէպէտ ծերունուն
Ըստ երևոյթին ականջ է դնում,
Բայց խելքն ու միտքը այնտեղ է միայն,
Որտեղ պարում է Շուշանն անընման.
Նա ստէպ ստէպ իւր աչքի տակով
Որսալ է ուզում սիրուն, շնորհքով
Կոյսի հայեացքը, բայց Շուշանն խկոյն,
Ինչպէս մի թիթեռ ծաղկապսակում,
Նորա աչքերից թաղչում է անվերջ
Պարողների լայն շրջանակի մէջ։
Բայց, խիստ ուշադիր ծերի ասածին,
Լսում էր Քեանդար կաղզուանեցին։
Ցնքերը կիտած, յենուած արմունկին,
Հայեացքը ուղղած ծերունու դէմքին,

Քեանդարը ծերի վէպերը տխուր
Լսում էր մէկ-մէկ վշտահար ու լուռ.
«Լաւ, զարիբ ամի», ասեց նա յանկարծ
Ծերուկ մշեցուն, պատմելուց դադրած.
«Ի՞նչպէս է ձեզ հետ քուրդը ձեր կողմի.
Ինչպէս մեզի հետ, ձեզ էլ թշնամի»։
Եւ լսում է նա վէպերին լսած
Ծերուկի բերնից տխուր յաւելուած.
Մշեցւոց կոյսը սիրուն, խորոտիկ
Բէկերի համար՝ մի անուշ խորտիկ.
Մշու դաշտերի առոյգ մշակներ,
Քրդի չախմախլուն՝ լուռ նահատակներ.
Մշու գեռահաս մանուկ ու ճիժեր՝
Անգութ քրդերին անբարբառ զոհեր.
Հարսը մրոտած, մարդը անարգուած,
Հայրը սպանուած, կոյսն առևանգուած,
Ցաճարը պղծած, և, ա՜հ, Արարչի
Սուրբ անօթները կապած շան պոչի...
Եւ հատիկ հատիկ աչքից ծերուկի
Գլորւում է այտին կաթիլն արցունքի
Եւ լսողներին ապացուցանում,
Թէ խեղճի սիրտը ինչ խիստ է ցաւում։
Լուռ էր Քեանդարը... շարժումով ուժգին
Նա իւր փափախը իջեցրեց աչքին.
Բայց շուտ սթափուեց և ասաց ծերին.
«Դուք էլ է.ք, ամի, դուք էլ մեր օրին»։

Եւ այս ասելով (կարծես նոր զարթաւ,
Կարծես խնդումը միայն նոր տեսաւ),
Կռան տակն առաւ տիկը մէջտեղից
Եւ եղած գինին պարպեց այնտեղից—
Այսպէս ծարաւած արաբն օազում
Սառը աղբիւրի վերայ է ընկնում։
Եւ դարձեալ նստեց մռայլ ու տրտում.
Աչքերը ցամաք, մրրիկը սրտում։
Նա չ'նկատեց, ինչպէս մշեցին
Նստեց հիւրասէր զարսցու սփռոցին,
Ինչպէս գնացին աղջիկների մօտ
Եւ իրա ընկեր-տղայքը ծանօթ,
Ինչպէս Ջալալը պարի մէջ մտաւ,
Իւր սիրականին վերջապէս գտաւ
Եւ ձեռքը բռնեց. կոյր էր Քեանդարը.
Նա չէր նկատում, որ և իւր եարը,
Նազելի Սալվին, հալումաշ եղաւ
Նորան նայելուց, և պարից ելաւ...
Բայց շուրջը դարձեալ նոյն կերուխումն է,
Զորս կողմը դարձեալ պար ու խնդումն է.
Թնդացնում է սար ու ձոր զուռնան,
Ծիծաղն ու երգը նորան պատասխան։
Իրիկնապահն է. դէթ մի անգամ էլ
Պէտք է պար բռնել, յետոյ ժամ մտնել.
Եւ մանուկ ու ծեր, հարս ու աղջկերք
Թռչում են... ծիծաղ, պար, երգ ու պարերգ...

Բայց ի՞նչ պատահեց, ի՞նչ եղաւ յանկարծ,
Որ բազմութիւնը, դեղնած, շւարած,
Ինչպէս ահագին մի հօտ ոչխարի,
Ամէն բան մոռցած և պար, և «դէրի»,
Ծնկին զարկելով, գլխին վայ տալով,
Լեղին պատռւած, փախչում է լալով.
Ձիչն ու աղաղակ սարերն են հասել,
Մայրը մանուկին, սա մօրն է մոռցել.
Երգի տեղ, օդը «վայն» է աղմկում,
Ծիծաղի տեղ, լայն ականջ է ծակում...
Այս ի՞նչ պատահեց, երկրաշարժ եղաւ,
Վանքի գմբէթը փլատակ եղաւ,
Թէ սարը, որտեղ կուրախանային,
Բերանը բացեց և իւր հրային
Վիժումն է տեղում ապարաղդ գլխին
Ուխտաւորների... ոչ ամենուին.
Բաքիրն է միայն, Կաղզւանի խան
Ալիի որդին, հետն երկու վարձկան.
Դոցա հետն առած եկել է այստեղ՝
Տանի հայուհի սիրուն ու անմեղ։
Իւր քրդերի հետ մէկ նա յարձակւեց,
Ուխտաւորներին այսպէս ցրուեց։
Եւ ինչպէս երամն ճնճղուկների,
Վախեցած տեսքից չար բազէների,
Թռթռում, զողում և յանկարծ մէկից
Թռչում, փախչում է իւր նստած տեղից,

Այսպէս մի բոպէ իւր տեղը մնաց
Զարմացած, դեղնած ամբոխը մնաց
Եւ յանկարծ վազեց, ձգեց վայնասուն,
Ամէն բան թողած, պտռտեց անկիւն.
Շուտով նոյն տեղը ոչ ոք չ'մնաց,
Բացի մի քանիր կոյսից սփրթնած.
Անբախտ հայ աղջիկ, սարուկ սարուկի,
Սարուկ լինելու դառը վիճակի
Բոլոր վշտերը մէկ դու ես քաշում.
Մի կողմից պէտք է ճնշուած, տրտում
Մի բռնաւորիդ սիրտը իջեցնես,
Նրա աղաւաղուած քմքովը լինես,
Միւս կողմից, ինքդ պէտք է դէմ դնես
Միւս բռնաւորիդ լերբ ու անարես։
Խեղճ, անօգնական, թոյլ արարածներ...
Երբ տեսան քրդի վայրագ երեսներ,
Նոցա ծնկները վախից ծալուեցին
Եւ նոքա դեռնին կամաց տպկեցին,
Ինչպէս տատրակներ վախկոտ, մոլորուած,
Երբ որ զգում են վերանէրն ուղղած
Կտուցն արծիւի, արիւնի ծարաւ։
Աղջի որդին մի նշան արաւ—
Եւ նոյն վայրկեանին մէկը քրդերից
Վայրկեանում թռաւ թամքի վերայից,
Բռնեց Շուշանի հաստ-հաստ հիւսերից
Եւ, քաշքշելով նրան չոքած տեղից,

Տարաւ ու գիրկը տուեց Բաքիրին...
Աղի արցունքին, գթութեան խնդրին,
Ցածր հառաչանքին եղաւ պատասխան
Երեքի վայրագ ծիծաղ միաձայն։
Ո՞ւր է եղբայրդ, Շուշան, սիրական,
Ո՞ւր ծանօթներդ, ո՞ւր քո ազգական...
Միթէ դարշ երկչոտ խլէզի նման
Ծակուծուկ մտած, քեզ ձեռք պիտ չ'տան.
Պիտի չ'ճարուի՞ այդ ամբոխի մէջ
Գոնէ մի՛ հոգի, որ ցաւիդ տայ վերջ.
Աւաղ, մարդ չ'կայ և կոյսն է միայն
Խնդրում, աղերսում գթութիւն իրան։
Մարդկային սրտի հետաքրքիր դաղանիք.
Նա, որ պիտ՝ հաշուէր կեանքը մի չարիք,
Նա, որ համարեա քշած էր երկրից,
Նա, որ վառած էր խարաղաններից,
Նա, որ տէրը չէր ձեռքի վաստակի,
Սիրում էր կեանքը սիրով երրակի
Եւ քիչ էլ երկար սողալու համար
Պատրաստ էր զոհել իւր անունն արդար
Եւ իւր պատիւը։ Շուշան, սիրահար,
Թէ խորթ քոյր էիր քո եղբօր համար,
Որ թուրը ձեռքին, մի հոգի նման
Զ'թռաւ եկաւ քեզի օգնութեան,
Զ'կտրեց թևը լերբ քրդի ուսից,
Որ այնպէս անխիղճ քաշեց քո հիւսից.

Ոչ, ծպտուն չելաւ, թուր չ'շողշողաց.
Շուշանն իւր լայնն էր միայն թողած...
Կոյսը դրկի մէջ, Ալլեի որդին
Մի խթան տուեց, դարձրեց իւր ձին.
Եւ մարդագողը ինչպէս որ եկաւ,
Այնպէս լռակեռմ և անյայտացաւ։
Այնժամ դուրս եկան մութ անկիւններից՝
Քարերի կողքից, վանքի դռներից
Սփրթնած, դեղնած ինչպէս մեռելներ
Մէկիկ ու մէկիկ խեղճ ուխտաւորներ։
Մէկը լալիս է, մէկը աշխարհում.
«Տարան, հա՜, տարան»... «Ովքե՞ր էին... ո՞ւմ»։
—«Շուշանին տարան». սարսեց Ջալալը,
Բայց վայրկեանի մէջ թողից իւր լալը
Եւ մէկից թամքեց իւր ձին կրակոտ,
Գոռաց. «Գա՛ հետս իգիթն ու սրտոտն»։
Ոչ ոք դուրս չեկաւ, լուռ էր ամբոխը...
Ահռելի խանի որդին էր գողը։
Իւր շուրջը նայեց խեղճ սիրահարը.—
«Ո՞ւր է Քեանդարը, ո՞ւր է Քեանդարը»...
Հեռուից, տհա, դէմքը չարդուշակ,
Խանչալը ձեռքին, բանից անտեղեակ,
Վազում է խմբին մռայլ Քեանդարը.
—«Ի՞նչ է պատահել».—«Տարան իմ եարը»...
—«Հեծիր, գալիս եմ», Քեանդարը գոչեց
Եւ մի շարժումով նժոյգին թռչեց։

Ծոի պէս նոքա ուխտաւորների
Աչքերից կորան կրծքին լեռների։

Մութ անդունդների, խորունկ ձորերի
Շրթով թռչում են արագ հինգ հոգի։
Թռչում է Բաքիրն հոգմերից ուժգին
Ուշաթափ եղած Շուշանը կրծքին,
Բայց հալածողն էլ շատ յետ չի ընկնում,
Եւ ինչ ոյժ ունի ձին է մտրակում...
Եւ կարմիր փոշին երկինք է ելնում
Նոցա իրարուց ծածկել ցանկանում,
Եւ պոկուած քարերն անդնդի կողքից
Ընկնում են ձորը ահռելի բարձրից
Եւ խանգարում են աղի սարերի
Խոր թմրութիւնն ու քունը դարերի։
Արդէն վաղուց է սիրտը Ջալալի
Դուրս է թռել այդ կրծքից պատանի,
Բռնել է Բաքրին, հարուածը տուել,
Բայց Բաքիրի ձին, արքայի վայել,
Կրկնակի բեռը իւր զօրեղ մէջքին,
Դեռ թռչում է խիստ արագ ու ուժգին.
Բայց քանի գնում, դաղրում է այնքան...
Եւ... էլ չի զգում մտրակ ու խթան։
Քրդերն այդ տեսան և շուտ յետ դարձան,
Հակառակ կողմը յանկարծ սլացան,

Հալածողների վերաներն ընկան,
Որ իրանց տիրոջ փախուստի ժամ տան։
«Զալալ, դու Թռիր Բաքրի եռևից,
Իսկ սոցա դու Թող խանչալիս և ինձ»,
Գոռաց Քեանդարը, խանչալը ձեռքին,
Կայծակի նման նա հասաւ քրդին։
Ինչպէս ահռելի Թիփոու ժամանակ
Ձիւնի երկու սիւն ուժգին և արագ
Տալով օդի մէջ պտոյտներ անվերջ,
Իրար են դիպչում, կորչում իրար մէջ,
Այսպէս աղմուկով, փոշի հանելով,
Նզովքներ իրար գլխի Թափելով,
Քեանդարն ու քուրդը Թափով ահագին
Միմեանց դիպան վիհի պռնկին՝
Կորան խճճւած... երբ փոշին անցաւ,
Ձիաւորներից մէկն անյայտացաւ.
Միայն Քեանդարն էր կանգնած անդնդին՝
Քուրդը զոհ գնաց վիհի արգանդին։
Բայց իւր կեռ Թուրը շողշողացնելով,
Վրէժից աչքից շանթեր Թափելով,
Միւս քուրդը շուտով հասաւ Քեանդարին՝
Եւ նոր կռւի տեղ եղաւ նոր շիրիմն.
Մի-մի ձեռքերով իրարուց բռնած,
Իջնում են իրար միւսով հարուած,
Եւ խանչալները արնոտ մինչև կէսն
Շողում, կորչում են, շողում շանթի պէս...

Եւ հրհրում են իրար դէպի ցած.
Ձին ծառս է լինում, ձորից վախեցած...
Բայց քուրդը թոյլ է, արենքամ եղաւ...
Եւ ահա կամաց ձիուց վայր ընկաւ,
Եւ իւր յորդառատ արեան մէջ լողաց.
Քեանդարը ոտքով գլորեց դին ցած
Եւ առաջ թռաւ դէպի Զալալը։
Ահա Զալալը. մինչև իւր գալը
Նա կ'խողխողէ տուփոտ Բաքիրին
Եւ մատաղ կանէ նորան իւր սրին.
Եւ նա հեռուից գոռաց. «Դէ՛, հասիր...
Զարկ ու կոխկռտիր գորան զինչ հասիր»...
Եւ Զալալն հասաւ, և սուր ճանկի պէս
Բռնեց Բաքիրի վզից ու հպեց,
Տարաւ ու բերեց խանչալը օդում,
Որ խորունկ ցցէ Բաքիրի սրտում.
Շողաց պողպատը... կեանքն որդու Ալու
Մազի վերայ էր... մի վայրկեան էլ, ու...
Բայց այդ վայրկեանին, երբ արդէն ուշ էր
Շարժելը անգամ սուրը և սուսեր,
Աներկիւղ կերպով, Բաքիրն համարձակ
Զգեց մի հայեացք խոր ու շանթարձակ
Զալալի աչքին և բարձր որոտաց.
«Ո՞ւմ... Ալու որդո՞ն, գեաւուր անաստուած»...
Եւ—օ, ստրկութեան դու ժանգ մահարար,
Ինչպէս քո զոհից ծածուկ, քեզ համար,

Մաշում, եղծում ես դու անագորոյն
Նորա վեհ հոգու խորքը վեհագոյն,
Եւ մի պատեհ օր, դէպքը բերելիս,
Նորան իրանից ամաչել տալիս—
Խանչալը, տարած Բաքիրի գլխին,
Ընկաւ գնդալով մօտակայ քարին...
Ինչպէս վրիպող որսորդից թռչունն
Թեւերը ուղղում և դէն է թռչում,
Եւ թուրքը զարկեց իւր ձիուն դաղրած
Եւ, կոյսը գրկում, թռաւ զարմացած:
Հասաւ Քեանդարը Զալալին շուար.
—«Այս ի՞նչ է Զալալ, խոր վէրքե՞ր առար.
—«Քեանդար, չ՚կրցայ... տարաւ իմ եարին»...
—«Զալալ, վայ քեզի, վայ քո փափախին»,
Ասեց Քեանդարը, դարձեալ սլացաւ.
Բաքրի ետևից Քեանդարը հասաւ...
Եւ էլ ոչ մի բան գլխից Բաքիրի
Չի հեռացնի սուրը Քեանդարի.
Ահա՛ նա ուղղեց թեւ ու թիկունքը.
Փայլեց խանչալը.—և քնքից քունքը
Անցաւ պողվատը Բաքիրի դէմքով...
Դին անդունդ ձգեց Քեանդարը ոտքով.
«Ափսոս չես տանում գնացած տեղդ
Ամբողջ քո ազգդ, հաւատդ ու ցեղդ»,
Կամաց շշնջաց և խեղճ Շուշանին
Գրկեց ու տարաւ շուար Զալալին:

ԵՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Լուռ ու մռայլ է, լերկ է ու ցամաք
Կաղզուանի մօտ լեռանց շրջանակ.
Զուրկ է ծառներից, թուփ ու տերևից,
Զուրկ է յորդառատ և առուակներից,
Զունի դեղանի ձորեր և այրեր,
Զունի ծաղկապատ գոյնզգոյն վայրեր:
Կարծես չար հոգին ասպատակութեան
Անցել է կարմիր սարերի վերան,
Աւրել տարել է նոցա կատարի
Բոլոր պճրանքն ու զարդը դեղանի
Եւ, դորա տեղը, ներկել է նորանց
Միայն մի գոյնով, իւր գոյնով սիրած:
Այնտեղ չի թռչում այծը սարերի
Եւ չի երևում վարազ վայրենի,
Բացի արծիւից—դիւրափոխ մի հիւր—
Այնտեղ չի թռչում ոչ մի ձայնաւոր:
Լուռ ու տխուր են բարձր լեռները.
Ցամաք ու լերկ են բաց կատարները.

Ինչպէս գլուխներ մազաթափ ու լուրջ,
Նոքա բոլորուել են քաղաքի շուրջ։
Սակայն Քեանդարը, նոր փախստական,
Այդտեղն է ընտրել ապաստանարան.
Զուռնի լերկ սարը տեսքեր դեղանի,
Դորա տեղ, գրկում ազատ օդ ունի,
Որ ներշնչում է դաղրած ու հիւանդ
Քեանդարի սրտին նոր ոյժ ու եռանդ.
Ինչպէս մայրը իւր անառակ որդուն,
Իւր սառ կրծքին է սարը թաղցնում
Քեանդարին մարդոց չար հայեացքներից,
Երբ արբած դաղրած իւր արկածներից
Փախստականը արիւնալուայ
Մռայլ, չարացած նորա մօտ կուգայ։
Բայց սարը սաստիկ մռայլ է այսօր
Եւ նորա գրկում ոչ մի շնչաւոր
Այլ ևս չի ցանկայ հանգիստ որոնել.
Երկնքից սև ամպն եկել է իջել
Նորա տափարակ, մռայլ գագաթին,
Սուլում վայում է, փչում է քամին
Երկինք է հանում փոշիի սիւներ,
Եւ լոյս օրն անում մի մարտի գիշեր։
Մռայլ է սիրտը փախստականի—
Քեանդարի սրտի կոծ ու կականի
Լոկ արձագանքն է այդ փոթորիկը—
Ձեռքերը դրած իւր լայն գօտիկը,

Մի քարի յենուած, նա շուրջն է նայում,
Քամու շուլին այսպէս ձայն բռնում.

Զարկ, կայծակ, լաց, ա՛յ սար, քեզ նայեմ.
Լաց կասեմ. ես քեզ հետ կ'վայեմ.
Դարդ ունիս, դարդդ բաց՝ հասկանամ.
Դարդից լաւ տեղեակ եմ.—ես հայ եմ։

Հերսդ հանեց քո կուրծքը պղծողը,
Վէրք տուեց գլուխդ կոխոտողը,
Իմ դարդն էլ քո հոդն է, քո հողը.
Ա՛յ սարեր, մէկտեղ լանք, ես հայ եմ։

Իմ սիրան էլ, ա՛յ սարեր, կտրել են,
Գլխիս էլ ձերի պէս կոխել են,
Օձի պէս աշխարհքից քշել են.
Ա՛յ սարեր, դարման լինէ.—ես հայ եմ։

Բայց ես էլ իմ սրտի խորքերում
Ձեր հրի պէս հուր եմ պահպանում.
Երբ սիրտս կորցրին վէրքերում,
Թող փորձեն կրակն էլ. ես հայեմ։

Եւ ուզիր, նորա սրտի տանջուած
Բոց ու կրակին խիստ երկար ծածկած

Շատ թուրք ու քրդեր բռնցկելիք եղան։
Աղի կիրճերը նոցա գերեզման
Եւ նորանց մահւան եղան վկաներ.
Բայց այդ գանգատը նոցա՞ դէմերն էր...
Քեանդարը գիտնալ այդ չէր ցանկանում.
Նա մէկ այն գիտէր, որ իւր հնձանում
Ագահ Ալիի թուրք արիւն՝ծարաւ
Ծառայի դանկից իւր հայրը մեռաւ.
Եւ նորա երկար տարուց վաստակին
Խանը տիրացաւ երկու բոպէին.
Քեանդարն այն գիտէր, որ իւր բարեկամ
Կոյսերից շատը քրդի ղոհ եղան.
Խարի պէս այրում էր սիրտը նորա
Վատ յիշատակը այն դառը օրւայ,
Երբ մի թուրք որսորդ լիրբ, արիւն՝ծարաւ
Կրակի նման հինգ ապտակ իջաւ
Նորա ծերունի պապի երեսին,
Որ ծերը յանկարծ խաբ տւեց որսին.
Իսկ ծերուկ պապը խեղճ ու վայարև
Ծեծւելիս բռնեց որսորդին բարև.
Քստմնեց Քեանդարն... Նա այդ բոպէին
Ուզեց ողբալով համբուրել ծերին
Եւ, միւս կողմից, ուզեց դէն հրել
Նորան իրանից։ Նա չէր մոռացել
Այն կարմիր գիծը, որ իւր մորակով
Թողեց նրա դէմքին, անտարբեր ձեռքով

Մի թուրքի աղա, լոկ նորա համար,
Որ աղի ճամփին կանգնեց անյարմար։
Եւ նորա սրտում կամաց ու կամաց
Բոլոր անարգանքն ու վիշտը քաշած
Ի մի ճուլւեցին ոյժով անտուաձ,
Դարձան մի զգայմունք.—վրէժի պահանջ։
Այդպէս և դարվինի հարուածներն ահեղ
Սրում են երկաթն փշրտելու տեղ։
Տրանջայ նորա հոգին զգայուն,
Տրտունջը փոխւեց վրէժի կայուն.
Եւ նա բողոքեց բռնութեան ընդդէմ
Եւ զէնքը ձեռին ելաւ նորա դէմ։
Նա նոցանից էր, որոնք չեն մարսում
Երբէք հզօրի փառքն ու զօրութիւն,
Եւ պատրաստ են միշտ անզօրի համար
Մեռնել, ենթարկւել ցաւի անհամար,
Եւ հանդիսանալ նորան պաշտպաններ,
Քան թէ ընդունել սիրոյ նշաններ
Հզօրի կողմից։ Քեանդարը ունէր
Մի ծերացած տատ—տէրտէրի թոռ էր—
Երբ նա պատմում էր Քեանդարին անփորձ
Իսրայէլացւոց և փղշտացւոց
Պատերազմները, սիրտը սրա կրծքում
Միշտ յաղթւածի համար էր խփում։
Զէր նայում իսպառ մանուկ Քեանդարը
Թէ կուսողներից որն է արդարը

Եւ որն անիրաւ. դա ինչքա՞ն նշան,
Մեծահոգութեան թէ փոքրոգութեան.
Ինչպէս էլ լինի. լաւ է աւելի
Եսականութիւնը փառամոլի,
Քան մեծահոգու անսրտութիւնը։
Բայց շարունակեմ իմ պատմութիւնը.
Առանց օրինակ և խրատների
(Մեռել էր վաղուց հայրը Քեանդարի)
Քեանդարն հասկացաւ իւր անբնական
Դրութիւնն իւր երկրում, տան մէջ պապական,
Եւ նոր կեանք ուզեց ազատ, կենսարար
Եւ վրէժ ուզեց քաշածի համար։
Բայց այդ կեանքն ուզեց վրէժի համար.
Զայրոյթից նորա կուրծքը դողահար
Սպասում էր մի օր պատեհ և յարմար,
Որ իւր մէջն եղած թոյնը մահարար
Տեղայ անընդհատ նոցա վերաներն,
Ով պատրաստեց այդ թոյնի կաթիլներն։
Եկաւ այդ օրը.—Քեանդարի համար
Չ'կայ մեղաւոր և չ'կայ արդար.
Կան թուրք և հայեր. մէկը մեղաւոր,
Գարշելի, ինչպէս օձը թունաւոր,
Միւսը արդար և անօգնական.—
Եւ գնաց արիւնն առուակի նման...
Ցէսը, կամ քամուց փոդփոդող ֆստանն,
Աբան, կամ մոլի սպիտակ չալման

Ծանր, անհերքելի ապացոյցներ են
Ցանցաւորութեան կրողների դէմ.—
Եւ քարի տակից գնտակը վզզաց,
Կամ ժայռի կողքից խանչալը շողաց
Եւ մարդը ընկաւ ծանր հառաչելով,
Սեպհական արեան մէջը լողալով.
Անօգնա՛ւտ, անմե՛ղ զոհ կոյր վրէժին...
Ինչպէս իւր ճեղքած ծառների խէժին
Պայծառ փայլելով, ուրախ խաղալով,
Արևն է նայում, այսպէս ժամերով
Կանգնած իւր զոհի դիակի վերայ,
Բերկրում է Քեանդարն արիւնով նորա։
Ահռելի է վրէժը համբերողի,
Եւս առաւել շուտով տարուողի.
Շուտ յափշտակուող սիրտը զգայուն
Ծայրայեղութեան խիստ շուտ է հասնում,
Որ թելադրում է մարդուն հանապազ,
Այլ զգացմունքներ իսպառ մոռացած,
Կեանքն ու ոյժերը միայն մէկի տալ.
Այդպէս էլ արաւ Քեանդարն ոխակալ։
Դարձեալ ու դարձեալ—արիւն էր թափւում,
Ալ, կարմիր արիւն, մարդկային արիւն.
Այրում էր արիւնն ձեռքը Քեանդարի,
Ինչպէս կրակ մի սոսկալի խարի.
Զզջում էր Քեանդար. և խայթը խղճի
Խորունկ էր ծակում սիրտը այդ խեղճի...

Բայց դարձեալ զարթում էր հէգ սրտի մէջ
Տարած անարգանքն—ու դարձեալ վրէժ.
Տաք ալիքներում նոր թափած արեան
Նա խեղդում էր խայթը զարթած զղջման
Եւ մոռանում ցաւն ու ողջ աշխարհը.
Բայց մի՞թէ, մի՞թէ մոռցաւ Քեանդարը
Իւր սէրն առաջին, իւր հարսնացուին,
Իւր սփոփանքը—չքնաղ Սալվիին,
Ոչ, անբաղդութեան դառը օրերին,
Դառն զիտակցութեան տխուր ժամերին,
Երբ մենք զզում ենք մեր հէգ ներկայի
Աղէտքն ու ցաւը և ապագայի
Անմխիթարութիւնն, այժով նորանոր,
Ինչպէս ակի ջուր գռի մէջ պղտոր,
Փայլում է յաւէրժ մեր սրտերի մէջ
Լոյսով թախծագին, շողերով անշէջ
Երջանիկ օրւայ քաղցր յիշատակը.—
Խոր էր սիրում այդ վշտի զաւակը
Եւ իւր տանջւած, չարացած սրտում
Իւր վրէժի հետ միշտ վառ էր պահում
Զքնաղ Սալվիի պատկերն աննման,
Տխրագին, լռիկ պարսաւի նման.
Այսպէս երբեմն ծառն ամիսներով
Մնունդ է տալիս սրտի հիւթերով
Անվնաս սնկին մի կողքին ծաղկած
Եւ թունաւորին, միւսին դուրս եկած։

Բայց նա ստեղծւած էր միայն սիրելու,
Ոչ, ծակը մնած, սարին տիրելու.
Ատելութիւնը կոյր ու ծայրայեղ
Նորա հոգու վրայ մի խոց էր տգեղ,
Որ դուրս էր բերել վատ ու դարշահոտ,
Գեղը մեռցնող, մեռած մթնոլորտ։
Մթնից... մանկան պէս, անդայեակ թողած,
Լալով, նւալով կամաց ու կամաց,
Իւր ձայնը կորեց սարերի քամին
Եւ անհետացաւ. նատից և փոշին...
Լուռ են սարերը... անցաւ փոթորիկ.
Բայց ոչ Քեանդարի հոգու մէջ մրրիկ։
Ինչպէս սոսկալի ուրուականներ,
Նրա դէմն են կանգնել նրա ձեռքի գործեր
Եւ նորա սրտից արիւն են քամում.
Ո՞ւմ իւր ցաւն ասէ, սարերի՞ն, քամո՞ւն...
Բայց նա խօսք կուզէ, կուզէ սպեղանի.
Այսքան տանջանքի ե՞րբ է արժանի
Սպանել ստիպւած մարդ սպանողը...
Ոչ, նա խօսք կուզէ... Իրան սիրողը
Գուցէ կսպասէ.—Հեծաւ նա իւր ձին,
Առաւ եափնջին իւր լայն թիկունքին
Եւ մի վայրկեանում լցրեց հրացան,
Գնտակի նման թռաւ Կաղզուան։
Թող բռնեն նորան, թող տանեն խանին
Խանի մեծ որդուն սպանող հային,

Բայց նա կտեսնի գոնէ մի անգամ
Իւր սիրած եարին, Սալվուն աննըման...
Եւ նա թռչում է... ահա իւր տունը...
Ահա աննըման իւր դոխի բունը.
Եւ նա տուն մտաւ փոշոտ ու դաղրած.
—«Բարով, անա՛ ջան». Ծերուկի, ղղլած
Նորա խեղճ մայրը ծեր բադի նման
Վազեց դէպի նա և գրկեց նորան.
—«Մինուճա՛ր բալաս, իմ Քեանդար-թառլան,
Լալուց աչքերիս լուսերը խաւ՛ան.
Այս ո՞ւր մնացիր»... և նորա ցամքած
Աչքերին կաթիլ-արցունք երևաց
Եւ, ինչպէս պաղ ցօղն խամրած վարդի մէջ,
Կորաւ այտերի խորշումում անվերջ:
Եւ նա պատմում էր իւր միակ որդուն,
Թէ քանի գիշեր անքուն ու արտում
Նորան սպասելով լուսացրել է,
Ինչքան աղօթել, ինչքան լացել է...
Օհ, մոր աչքերի դու մաքուր գոհար,
Ձե՞ս ընկել արդեօք և ցուրի համար:
—«Անա, այն ասա՛, Սալվին ի՞նչպէս էր»:
—«Քեզ համար կուլար մինչև կէս գիշեր»:

Ո՞ւր է իմ գրչին այնքան զօրութիւն,
Ո՞ւր հոգուս այնքան և կարողութիւն,

Ո՞ւր խօսքիս հոգի, վերածնող ոյժ,
Ո՞ւր երգիս այնքան դայլայլիկ անոյշ,
Որ կարողանամ մոսամբ վերածնել
Սալվիի աչքեր, պաշտելու վայել.
Այն մեծ մեծ աչքեր, աչքեր սեւորեակ,
Այն սիրող-փարող կարեկից հայեացք,
Որ հաւատ կուտար ոչնչականին,
Որ աստուած կուտար նոյն իսկ ցուրային:
Ոչ, ոչ, իմ միտքը երկինք չի հասնի,
Որ, ոգեորուած Պիւթագորասի
Երկնային մարմնոց ներդաշնակութեամբ,
Նա կարողանայ վար բերել մոսամբ
Զքնաղ Սալվիի աչքերն աննըման
Եւ այդ հայեացքը պարզ ու անսահման:
Լոկ իմ հայեացքն է երկինքը տեսնում,
Բայց յարմար խօսքեր միտքս չի գտնում,
Որ համեմատէ հանդարտ գիշերուայ
Սև երկնքի հետ աչքերը նորա:
Զքնաղ էր Սալվին, բայց գեղեցկութիւնն
Կրկնապատկում էր այդ անմեղութիւնն.
Ինչպէս առաջին իւր գործում հանճարն
Եւ չքնաղ կոյսը չէր տեսնում խսպառ
Իւր բոլոր յարգն ու առաւելութիւնն
Եւ աստուածային իւր գեղեցկութիւնն:
Լուսատարի պէս մութ գիշերներում,
Նա չէր նկատում իւր չորս կողմերում

Իւր սփռած լոյսը, լոյսը գեղանի,
Որ շլացնում էր ծեր ու պատանի։
Եւ այդ սուրբ ու պարզ անգիտութիւնով
Նման էր մանկան քնած անմեղով,
Որ իւր պատկերով սիրուն ու խաղաղ
Ծերունու դէմքին բերում է ծիծաղ։

Լուսնեակ գիշեր է... փչում է զեփիւռ.
Հեռուից լսւում է Արաքսի մռմռուռ։
Այստեղից կամաց նորա տաղերին
Զայն է պահում մեղմ դեղին թթենին
Իւր սոսափիւնով... վարդերի քնքոյշ
Տանձ ու խնձորի բուրմունքը անոյշ
Քեանդարենց այգում լայն ու ընդարձակ
Լցրել են օդը փոքր ինչ տօթ ու տաք։
Դեղձի ծառի տակ, իւր սիրուհու մօտ
Նստած է Քեանդարն լուռ ու մռայլոտ.
—Քեանդար, սիրելիս, ինչո՞ւ ես փոխուել.
Այս ի՞նչ է տեսքդ, այս ի՞նչ ես դառել.
Զուխտդ փոշիից դառել է կարմիր,
Ասեց Քեանդարին ձայնով սիրալիր
Սալվին և բռնեց ձեռքը սիրելու.
—«Ոչ, դա փոշի չէ,—արիւն է մարդու»։
Սփրթնեց Սալվին, ձեռքը յետ քաշեց,
Քեանդարի վերայ սարսափած աչեց,

Եւ անշարժ մնաց, մեխուած իւր տեղը.
Այսպէս դառնուկին գնացած տեղը
Քարացնում է հայեացքը օձի.
—«Սալվի, այ Սալվի, թողնո՞ւմ ես ինձի».
Ոչ, նա չէր թողնում իւր սիրականին
Նոր ուշքի եկած, նա բռնեց ուժգին
Քեանդարի ձեռքն ու ասեց դողալով.
—«Բայց ինչո՞ւ Քեանդար. ո՞ւմ... ի՞նչ պատճառով»
—«Սալվի ջան, թող այդ, բան մի հարցնիր.
Ես գիտեմ ինչու՝ դու... դու ինձ փարիր»...
Եւ նորա դէմքը մռայլ ու տրտում
Տանջանքը եղծեց, կարծես թէ սրտում
Չին ու մռայլած մեծ վէրք բացւեցաւ,
Բայց շուտ անցաւ այդ. Սալվին մօտեցաւ
Եւ յանկարծ, ինչպէս անձրև յորդառատ,
Քեանդարի աչքից երկար, անընդհատ
Արցունք վազեցին...

ՔԵԱՆԴԱՐ

Ա՜հ, թէ գիտենաս, իմ եար նազելի,
Թէ ինչ եմ քաշել գլխին սարերի
Եւ ինչ պիտ՝ քաշեմ, ինձ հետ ես լայու։

ՍԱԼՎԻ

Քեանդար, միտք ունիս դարձեալ գնալու,
Ախ, խղճա, խղճա քո հարսին, Քեանդար,

Տուն վերադարձիր, թող այդ ձորն ու սար.
Զղջա՛, տուն արի, ես ու դու միայն
Գիտենք քո մեղքը։

ՔԵԱՆԴԱՐ

Ոչ, ոչ Սալվի ջան.
Զէ, ես բարև տալ չեմ կարող նորան,
Ով, թէև ինձնից ցած հազար անգամ,
Իրաւունք ունի բարև պահանջել.
Թող այդ բաները,—նա գրկեց եարին,—
«Դու միայն փարէ, փարէ Քեանդարին։»
Վիշտը երեսին, կոյսը աննըման
Տեսաւ իւր եարի տաղնապն հոգեկան.
Էլ ձայն չի հանեց, համբոյրով միայն
Ուզեց նոր ճամփից յետ բերել նորան.
Ուզեց կակղացնել նորա ցաւն ու դարդ
Եւ նորա հոգին զոռոզ ու հպարտ։
Եւ նա զգւում էր Քեանդարին երկար
Եւ բաղդաւոր է դորանից Քեանդար
Եւ այդ բոպէին կ'ուզենար յաւէրժ
Այդտեղ էլ մնալ անձայն ու անշարժ.
Բայց ահա, ահա արդէն լուսացաւ,
Ահա մարդկերանց և ձայն լսեցաւ...
Բայց այս ովքե՞ր են... ձայներն մօտեցան.
Խանի մարդիկն են. Քեանդարին տեսան.
Նզո՞վք ու անէծք. այդին թափուեցան.

Վայրկեան՝ Քեանդարը թռաւ նժոյգին.
Վազեց դէպի տուն դողահար Սալվին
Եւ մի թուրք գոչեց. «դէ՛, հիմա ո՞ւրին»։

ԵՐԴ ԵՐՐՈՐԴ

Արաքս... արդեօք ո՞վ, արդեօք ո՞ր հայը
Զէ կցել նորա լացին իւր վայը,
Արդեօք ո՞վ նորա ձայնը լսելիս,
Արդեօք ո՞վ նորա մօտիցն անցնելիս
Զէ խառնել նորա ջերերին պղտոր
Աղի արտասուք սրտից վիրաւոր։
Հա՛, խայտա՛ Արաքս, որդիքդ խուլումունջ
Հիմա լսում են քո լացն ու մրմունջ։
Լոկ այն արցունքը, դոհար գեղանի,
Որ ընկաւ աչքից մեծ Պատկանեանի,
Ինչո՞վ չէ, Արաքս, վերքիդ սպեղանի.
Նա մի արմատ էր փայլով հրաշալի,
Զուլաճ ապաբաղդ մի ժողովրդի
Սիրտը կրակող կայծերից դարդի,
Որ մեկի աչքում փայլելով անշէջ,
Դողաց և ընկաւ պղտոր ջրիդ մէջ։
Օհ, քանի անգամ այդ արտասուքին

Կցել եմ լացս, ձայնս վշտագին,
Օհ, քանի անգամ կանգնած միայնակ
Քո ափերի մոտ գիշեր ժամանակ,
Աղաղակել եմ. «փեսաներդ ո՞ւր են».
Պատասխանել ես. «խիզախ դուն, ո՞ւր են»...
Բայց խայտա՛, Արաքս, մեռաւ քո փեսան
Բայց ահա՛, ահա որդիքդ հասան.
Նոքա կ՚կարեն լացդ վշտագին
Եւ ծուխ կըդնեն փեսայիդ շերմին:
Հանդիստ է այսօր Արաքսը պղտոր.
Հանդարտ է օդը. փչում է զեփիւռ.
Նիրհում է խաղաղ պարզնկայ գիշեր.
Հանդարտ ու հանդիստ—շրջակայ սարեր,
Կարծես լսում են լռիկ ու թմրած
Պղտոր Արաքսի մրմունջը կամաց,
Ինչպէս գիւղական մասլահաթներին
Գիւղացիք իրանց քահանաներին:
Այն կամրջի մոտ, Զվարի գիմաց,*)
Մի ձիաւորի ստուեր երևաց.
Ահա մոտեցաւ կամրջի գլխին.
Քեանդարին է դա. կ՚երթայ Սալվին:
Իւր արկածներից յոգնած, բեզարած,
Թափած արիւնից արբած ու դաղրած,

*) Կաղզւանը Թուրքերի ժամանակը բաժանւած էր եօթը Թաղի. Զվարը հայոց Թաղերից մէկն էր և գտնւում էր ուղիղ Արաքսի ափերի մոտ:

Ուզում է Սալվուն փախստականը՝
Մի ժամ մեռցնէ սրտի կականը:
Իւր Սալվիի մոտ ուզում է դարձեալ
Իւր արտասուքով հանել ու լալ
Ձեռքերին չորցած կիզող արիւնը,
Եւ նորից գտնել հանդստութիւնը.
Այսպէս բռնաւորն փառքից կուրացած,
Իւր խղճմտանքի խայթից տանջւած,
Կատարել կուտայ, հայցելով հանդիստ,
Իւր զոհի վերայ ժամ, հոգեհանգիստ:
Բայց տատանւում էր Քեանդար մռայլոտ,
Գնա՞ յ, չգնա՞ յ այսօր եսրի մոտ.
Մթին ու նսեմ նախազգացմունքներ
Յետ էին մղում նորան դէպ՝ սարեր:
Նա անվճռական կանգնած էր անշարժ,
Ինչպէս իւր երկար ճամփայի առաջ
Ճանապարհորդը, կամ ինչպէս մի հարս,
Որ իւր հօր տանից գնում է անդարձ.—
Բռնել են կարող այդ «ղաչաղ» քաջին,
Տանջել են կարող Թուրքերի դահճին.
Alea jacta est.— «Ջնջել չի լինի
Ճակտիս գրածը. ինչ կուզէ՝ լինի»:
Ուղղեց նա ուսից ընկած եափնջին,
Զարկեց իւր ձիուն, գնաց կամրջին
Եւ մտաւ սիրուն, կեղտոտ Կաղզւան.
Օհ, ո՞վ չ՚գիտէ քաղաք տաճկական.

Այնտեղ բնութեան հրաշալիքները
Եղծում են մարդու կեղտոտ հեաքերը,
Այնտեղ գեղեցիկ ձիթենիի մոտ
Դիզում են կեղտի կոյտեր գարշահոտ.
Ոսկի կիտրոնի հրաշալի հոտը
Պղծում է մի շան քայքայուած ոտը...
Բայց ուրիշ էլ ի՞նչ ուզենք, ով ծանօթ,
Նրանից, որ ինքն է մի դի գարշահոտ:
Թռչում է Քեանդար քաղաքով քնած,
Եւ ձիու ոտքի տրոփը սաստկացած
Սաստկացնում է զարկը և տրոփ
Քեանդարի սրտի... և նեղ ու կեղտոտ—
Ինչպէս փողոցը, որ տեսաւ տրտում.
Մեծ թաղաւորի փորի խորքերում
Սիրուն հէքիաթի անմահ աքլորը—
Փողոցի ծայրին հասաւ Քեանդարը.
Եւ ահա, ահա և իրան այդին.
Նա այնտեղ թռաւ շարժումով ուժգին
Եւ տուն... Բայց ինչպէս մի գնտակահար,
Ինչպէս կայծակի հրից շանթահար,
Կամ ինչպէս ճամփորդ, որ քայլը վերջին
Դրեց բաց բերան խոր վիհի շրթին,
Յանկարծ ետ ընկաւ և անշարժ մնաց,
Վերջին քայլն արած տեղումը մեխուած.
Եւ յանկարծ ձչաց ձայնով սոսկալի.
Եւ ձիչը, ինչպէս մի ողբ տաղտկալի,

Սարսեցրեց դիշերն.—սարն ու ջրվակայք
Տուեցին այդ ձայնին հազար արձագանք
Եւ, կցած իրանց ձայներն բիւրաւոր,
Այն վեր հանեցին դատի ահաւոր...
Բայց ի՞նչ պատահեց, ի՞նչ եղաւ, ի՞նչ կայ.
Մահ, ոչինչ, ոչինչ և ոչինչ չ'կայ,—
Ոչ մայր, ոչ Սալվի, ոչ տուն, ոչ հնձան,
Կայ մի մոխրակոյտ, մի սև դերեզման,
Կան առանց տերև հրկիզեալ ծառներ,
Ինչպէս առանց մորթ ձեռքի ոսկորներ.
Եւ մոխրակոյտը այդ ծառների հետ
Կանաչ այգու մէջ է մի սեւուկ կէտ,
Որ դրաւում է մարդու աչքերը,
Որ և ծակում է սրտի խորքերը,
Ինչպէս թարախոտ խոցը կապուտկած
Սիրուն երեսի վերայ դուրս եկած:
Իրար անցրեց ողջ հայոց թաղը
Անբաղդ Քեանդարի սուր աղաղակը.
Եւ ամեն կողմից ահա դուրս եկան
Վախեցած դէմքեր, շատ և անձայն.
Եկաւ Շուշանը, իւր շալը ուսին,
Եկաւ Զալալը—նորա ամուսին.
Եւ կարճ միջոցում հայերն Զվարի
Հաւաքուեցին մոտն անբաղդ Քեանդարի.
Կարեկից աչքով նայում են նոքա,
Ինչպէս Քեանդարը դժուած, անդգայ,

Տաղտկալի լալով, ինչպէս երեխայ,
Ընկել է թաւալ տաք մոխրի վերայ,
Մոխիր է ցանում գլխին ողբալով,
Քարին է զարկւում հեծելով, լալով.
Իւր սգով տարւած, չտեսաւ Քեանդար,
Ինչպէս վերցրին լուռ, կարեկցաբար
Իրան տաք գետնից.—նա կըհառաչէ.
«Ախար սա ի՞նչ է, ախար սա ի՞նչ է».
«Լսիր ինձ Քեանդար, ասեց Ջալալը,—
Հիմայ ինչ օգուտ վայելն ու լալը—
Խանը ուզում էր փախցնել հարեմ
Զքնաղ Սալվիին—ինչ երկար անեմ—
Իւր զողութիւնը ծածկելու համար,
Նա կրակ տւեց անողորմաբար
Նորա հնձանին զիշերնաժամին,
Եւ բռնեց տարաւ չքնաղ Սալվիին.
Կրակը անցաւ յետոյ քո տանը»...
Քշւածի նման այս պատմութեանը
Ականջ էր դնում անբաղդ Քեանդարը...
Բայց յանկարծ հանեց նա իւր խենժարը
Եւ բարձր գոչեց իւր ընկերներին,
Որ նորա շուրջը լուռ կանգնած էին.
«Տղա՛յք, այս հրում, դեռ ևս ոչ մարած,
Այրեցին մէկից երեք արարած՝
Ինձ, մորս, եարիս, եարիս աննըման,
Այրեցին, տեսաք, առանց դատաստան

Եւ փոշին տւին սառ քամիներուն.
Տղա՛յք, աշխարհի ոչ մի անկիւնում
Այդպիսի չար գործ դեռ չէ տեսնւած.—
Է՞լի համբերենք վզերս ծռած.
Եկ-արիք երդուենք այս տաք մոխիրով,
Մոխրի մէջ թաղած սև ոսկորներով՝
Զուտենք, չխմենք, չլանք, չծիծղանք
Մինչև սոսկալի այս ծաղրն ու հանաք—
Մեր պատւին դրած այս խարը կեղտոտ—
Զլւանանք խանի արեամբ դարշահոտ...
Հիմա զիշեր է—յարմար ժամանակ—
Հերիք համբերենք, հերիք է, գնանք...
Ինչպէս ձկնորսներ զմայլումով, խաղով,
Թուրքի սև արեան մէջը լողալով,
Հոտած հարէմի մութ ծակուծուկից
Նոցա դուրս քաշենք բոլորին մէկից,
Մեր անդութ ձեռքում թռթռացնենք
Եւ վատ հոգիներն պնչերից հանենք...
Գնանք և տեսէք՝ մէկ ես քանիսի
Ծախում եմ խանին պատիւն իմ հարսի:
Ով դեռ սիրտ ունի այրական կրծքում,
Ով առանց վախի փափախ է ծածկում,
Գա՛ հետս, գնանք, վերջ տանք մեր ցաւին,
Նան նման մորթենք անասուած խանին...
Ածիլէ՛ բեխը յետ հնացողը,
Վատ լինի դորա հետը խօսողը»:

Եւ հուր թափելով աչքից չարդուշակ,
Նա ուզեց առաջ գնալ համարձակ.
Բայց մէկիկ մէկիկ յետ յետ քաշուեցին
Ներկայ եղողներն իրար եռեւից...
Քեանդարը թռաւ նոցա եռեւից.
—Տղա՛յք, կանգնեցէ՛ք, չշարժուէ՛ք տեղից,
Եթէ ոչ, վկայ այս տաք գերեզման,
Ես արիւնք կանեմ հէնց սորա վերան...
'Ի սէր Աստուծոյ, այսպէս ժամանակ
Ինձ վայր է՛ք ձգում այստեղ մեռ-մենա՞կ...
Գոնէ մի տապ... վա՜յ ձեր օրերուն.
Ջալա՛լ, գոնէ դուն... Աստուծոյ սիրուն»...
Բայց Քեանդարի մօտ էլ մարդ չ'մնաց.
Ամենքից յետոյ Ջալալն էլ գնաց...
Եւ հաւատարիմ նորան մինչ ի վերջ
Մնաց ծեր մայրը իւր տաք մոխրի մէջ:

Հագած գիշերւայ մութ ու սև սաւան,
Ինչպէս գերեզման լուռ է Կաղզւան:
Բայց այս ի՞նչ երգ է, այս ո՞վ է երգում,
Խախտել լռութիւնն ո՞վ է յանդգնում.
Եւ ինչ սոսկալի է երգը հնչում.
Կարծես այդ երգի ամեն մի հնչիւն
Կաթիլ ու կաթիլ սրտից երգողի

Արիւն է քամում.—երկու դագաղի
Տխրանուագ է երգում Քեանդարը.
Երգը լսում է խանձուած մայրը
Եւ մութ գիշերը լուռ և ուշադիր.
Ցամաք աչքերին շաղ տալով մոխիր,
Զոքած իւր անբաղդ մօր գերեզմանին,
Այսպէս է երգում Քեանդարն իւր «մանին»:

Մայր, թէ տեսնես սև երկնքից
Մթնած աչքերս ցամաք,
Գիտցիր, մոխրէ շերմիդ տեսքից,
Որդիդ ինքն է մի դիակ:

Այս կրակը շոգիացրեց
Արտասուքս, մայր իմ խեղճ.
Նոցա ջուրը նա շաղ տուեց,
Աղը թողեց խոցիս մէջ:

Զորցաւ լացի ակն իմ սրտում.
Այնտեղ մնաց սև ագէտ.—
Սիրտս լուռ է, լուռ ու տրտում
Այս մոխրի պէս դիւդ հետ:

Եւ մոխրի վերայ երկար, շատ երկար
Երգեց անպատվուած, անարգուած Քեանդար.

Բայց նա բարձրացաւ իւր չոքած տեղից,
Անհաստատ քայլով գնաց այնտեղից.
Նա ոչ էր գնում. ինքն էլ չգիտէր...
Բան չէր երևում. մութ, խաւար գիշերն
Իւր սև քողովը պատել էր և ծառ
Եւ թուփ և տերև, տուն և ճանապարհ.
Խաղաղ գիշերը հանգիստ էր և մունջ,
Միայն լսվում էր Արաքսի մրմունջ.
Եւ Քեանդարն, ահա, արագ քայլերով
Ծառի և ձիւղի ստէպ ստէպ դիպչելով,
Գնաց դէպի նա. գետի ծոցի մէջ
Նա իւր ցաւերին ուղեցաւ տալ վերջ.
Նղովեց մարդկանց, ամբողջ աշխարհը,
Գնաց մեռնելու անբաղդ Քեանդարը...
Լոյսը բացւում էր... Նա ոչ է գնում.
Գետի տեղ, ուղիղ քաղքի կենտրոնում.
Այո՛ ուղղակի նորա դէմ ու դէմ
Ահա ջամիի բարձր մինարէն,
Ինչպէս մի սև օձ իւր պոչին կանգնած.
Երբ նա վեր նայեց, այդ տեսաւ յանկարծ,
Շանթեր փայլեցին նորա աչքերին
Եւ նա բռնցքով սպառնաց մինարին.
Նորից, նոր ոյժով գարթեց նորա մէջ
Ցաւն ու տանջանքը սաստիկ ու անվերջ.
Զարթան նորա մէջ մոխրի մէջ թաղուած
Սրտին սիրելի երկու արարած...

Նա միտքը բերեց դէպքը գիշերուայ.
Նա միտքը բերեց կեանքը ողջ տարուայ.—
Եւ մրրիկ ելաւ նորա սրտի մէջ,
Արիւնը եռաց անսանձ ու անշէջ...
Ահա լուսացաւ, արդէն ծեր մոլլան
Գնում է աղան տալու մինարան...
Աչքերին արիւն, դէմքը եղծուած,
Քեանդարը նորան մօտեցաւ յանկարծ.
Նորա շրթունքը դողդողում էին,
Նա կամաց ձայնով ասեց մոլլային,
(Որ լսեց նորան խիստ ուրախերես)
Ճպռոտ, հաւատս ուրանում եմ ես:

10 Դեկտեմբերի 91 թ.
Մոսկւա.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՀՈՐԱՑԻՈՒՄԻՑ

ԳԻՐՔ I. ՕԴԷ XXXVII.

ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

Nunc est bibendum, nunc pede libero
Pulsanda tellus; nunc Saliaribus...

Ընկերներ, հիմա մենք պէտք է խմենք
Եւ ազատ ոտքով դետինը ծեծենք.
Արդ ժամանակն է՝ թող Սալիական
Կերակուրները պճնեն դից սեղան։
5. Մինչև արդ մեղք էր ձեռք տալը գինուն,
Պահւած պապական պահարաններում,
Երբ Կապիտոլը քարուքանդ անել
Կ'ուզէր թագուհին և մեզ նւաճել։
Մի խումբ մարդկանց հետ վատ ու ցաւագար*
10. Ուզում էր անել նա բանն անհնար.—
Ցուսադրւում էր բաղդի ծիծաղից.
Սակայն ազատւած հուր ու կրակից

*) Արևելեան սովորութեան համաձայն, Կլէօպատրային շրջապատում էին ներքինիներ։

Հաղիւ մի՛ նաւը գոռոզին սանձեց.
Իսկ Կեսարը նրա կոյր միտքը բացեց.—
15. Նաւով հետևեց փախչող թագուհուն,
(Ինչպէս մի բազէ երկչոտ աղաւնուն,
Կամ ինչպէս որսորդ մի նապաստակի
Մէջ Էմոնայի ձիւնապատ դաշտի)
Որ բռնէ դուստրը նախախնամութեան.
20. Բայց սա ցանկացաւ այլ աղնիւ վախճան
Եւ ոչ կնոջ պէս սրերից վախեց.
Հեռու երկիրներ նա ընկնել չուզեց.
Ոչ, պարզ հայեացքով անվախ ու անահ
Նայում է նա իւր պալատի վերայ,
25. Ցեռոյ շոյում է դաժան օձերին,
Որ սև թոյն ծծէ ձիւնափայլ մարմինն.
Նա չուզեց տեսնել բիրտ Ալիբուռների
Ցաղթելն, ու մեռաւ մահով մեծերի,
Եւ հպարտ կառքին հետևել չուզեց
30. Ինչպէս մի ստրուկ, կինը վեհ ու մեծ*։

---

*) Չնայած, որ Կլէօպատրան հռովմայեցիների համար եղաւ շփոթութիւնների և անբաղդութիւնների պատճառ, բանաստեղծը չի կարող անտես թողնել և չգնայլել նորա մեծահոգութեամբ, թէև օդէյի սկզբում հրաւիրում է հռովմայեցիներին կատարել մասնաւոր և հասարակական տօնախմբութիւններ թագուհու մահուան պատճառով։

ԳԻՐՔ III. ՕԴԷ XXX.[1]

Exegi monumentum aere perennius,
Regalique situ pyramidum altius.

Ես կանգնեցի ինձ մահարձան պղնձից պինդ ու անանց,
Որ իւր ձակտով արքայական բուրգից բարձր է չափազանց.
Այն չի քանդէ ոչ հիւսիսը, ոչ անձրևը մնասակար,
Ոչ Թռիչքը մի քանի շարք տարիների անհամար:
Ոչ, չեմ մեռնի ես ողջովին և մեծ մասը իմ կեանքից
Ողջ կ'մնայ և կ'խորշի գերեզման ու պատանքից.
Ես կ'մեծնամ ու կ'անեմ նոր նոր փառքով յետագայ,
Քանի քուրմը լուռ կոյսի հետ Կապիտոլ կ'բարձրանայ[2]:
Եւ ինձ համար կ'ասեն, որ ես այնտեղից եմ, ուր կատղած
Առիֆիդուան է սուլում, և ուր ժողովրդին խաշնարած
Դատ էր անում Դաունուսը[3] ջոր ու ցամաք վայրերում.
Կասեն, որ ես հզօր դարձայ՝ Թէպէտ խեղճ ու անանուն,[4]
Որ ասի երգն իտալական էօլական նւագով
Ես առաջինն, Մելպոմենա, պանծա շահած վաստակով
Եւ իմ գլխի ալիքները բարեյօժար քո ձեռքով
Դու պսակիր դելֆիական դափնեայ շքեղ պսակով:

---

[1]) Այս օդան ունեցաւ անթիւ հետևողներ թէ հների և թէ նորերի մօտ:

[2]) Քանի որ կ'շարունակւի Իւպիտերին և Վեստային զոհաբերութիւններ անելը, ուրեմն, ըստ հռովմայեցւոց կարծիքի, յաւիտեան:

[3]) Դաունուսը Ապուլիայի առաջին թագաւորն էր:

[4]) Հորացիուսը իւր գործունէութեան սկիզբն, քանի դեռ չէր ծանօթացել Մեկենասի հետ, Հռովմում առանձին նշանակութիւն չունէր:

ԳԻՐՔ I. ՕԴԷ XIII.

ԼԻԴԻԱՅԻՆ

Cum tu, Lydia, Telephi
Cervicem roseam, cerea Telephi...

Երբ դու գովում ես վիզը վարդագոյն,
Կամ գոգտր ու փափուկ ձեռքը Տելեֆի,
Աւա՜ղ, Լիդիա, իմ սիրտը խսկոյն
Վառում, այրում է մաղձն անտանելի.
Խելքս ու գոյնս թռչում են այնժամ,
Եւ այտէս կամաց արցունք է կաթում,
Եւ քեզ ցոյց տալիս, թէ ինչպէս տարտամ
Ինձի ներքևից կրակ է տապում:
Ես այրւում եմ, երբ խրախճանին
Եղծում է փայլուն ուսդ զեղխութիւնն,
Կամ երբ շրթունքիդ տաքցած պատանին
Ատամով խորունկ սպի է խարում:
Ոչ, իմ նազելի, եթէ ինձ լսես,
Հաւատարիմ մարդ չես ասիլ նորան,

15. Ով որ պղծում է համբոյրը այնպէս,
Որին իւր նեկտարն տուեց Վեներան.
Բայց երջանիկ են նոքա երրակի,
Որոնց պահում է կապը անբաժան.
Կանցնի նոցա օրն առանց փոթորկի,
20. Մինչև չ'խփէ ժամը բաժանման:

ՀԻՑՆԻՑ

I.

Զեռքովս նորա աչքերը փակած,
Երթունքն եմ պաչում.
Ասում է. «ինչո՞ւ, իմ ընկեր սիրած,
Ինձ մութն ես անում»:

Այս հարցի հետ է նա տարուածի պէս.
«Ինչո՞ւ, սիրելիս,
Բոլոր ժամանակ լոյսը ծածկում ես
Ինձ համբուրելիս»:

Զգիտեմ նորան ի՞նչ պատասխան տամ—
Միամիտ է շատ—
Ես, լոյսը ծածկած, պաչում եմ միայն
Երթունքն անընդհատ:

II.

Ցուրտ ու տապին նա կանգնած է
Կաղնու նման տարիներ.
Ոտքը գետնի մէջն է նորա,
Ձեռքն երկինք է տարածել:

Տանջւում Բահարաղան.
Բայց նա շարժեց Բրահմային
Եւ սա, կակղած, թափեց երկնից
Ողջ Գանգէսը ահագին:

Նոյնքան և ես տանջւում եմ—
Ոչ, աւելի, աւելի—
Իսկ դու չ'ուզես թափել աչքից
Ինձ մի հատիկ կաթիլի:

III.

Որտեղ լինես, միշտ այնտեղ եմ,
Որպէս գնաս, դէմդ եմ ելնում,
Քանի ինձ հետ խիստ ես վարւում,
Այնքան տաք եմ սիրահարւում.

Անուշ հերսդ ես սիրում եմ.
Փայփայանքիդ չեմ սովորած.
Թէ ուզում ես՝ քեզնից պոկ դամ,
Սիրահարւիս պէտք է վերաս:

IV.

Ես թափառում եմ անտառում լալով.
Տորդիկը ճիւղից ճիւղն է թռչկոտում
Եւ ինձ թաւախիտ տրւքի միջից
Նշշւացնում է. «ինչո՞ւ ես տրտում»:

Այդ ծիծառներից, քո քոյրիկներից
Գնա իմացիր—կպատմեն ինչու.
Նոքա այս գարուն բուն էին շինում
Պատուհանի տակ իմ թանգ սիրուհու:

V.

Գերաշխարհիկ էր այն բոպէն, երբ սանձել
Կարող էի իմ մեղաւոր ցանկութիւնք,
Բայց երբ այժմ էլ չէր յաղթում այդ անել,
Ըզգում էի ես դարձեալ մեծ զւարճութիւն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

Նաւապետին 3
Երբ քեզ տան լուր 5
Ազնիւ ընկեր 7
Անհոգ, անդարդ 8
Քո աննման 9
Վարդ քաղողներ 10
Երբ նայում ես 11
Արեգակ 12
Շուշանին 13
Երանեակին 14
Երանեակին 15
Թող սև փալլուն 16
Ո՛չ, ժամանակն է 17
Շատ ես խաղցել 18
Պոէտին 19
Եար, քեզ հետ 20
Հայ աղջկան 21
Թառամած վարդեր 22
Աշխարհիս մէջ 23
Աւետիս 24
Մշեցւոց երգը 26

II.

Մտածմունքներ Անիի աւերակների մօտ 28
Մինչ կ'հեծէ 31
Ճորոխի առաւօտը 32
Քեանդար 33
Ընկերներին, Հորացիուսից 74
Օդէ » 67
Լիդիային » 77
Ձեռովս նորա. Հայնէից 79
Ցուրտ ու տապին » 80
Որտեղ լինես » 81
Ես թափառում եմ » 82
Գերաշխարհիկ էր » 83

ՎԵՐՋ.

ՎՐԻՊԱԿՆԵՐ.

Երես.	Տող.	Սխալ.	Ուղիղ.
3.	4.	բորեաս.	Բորեաս
5.	4.	Նրա Թշնամեաց	Բռնաւորի
29.	5 ն.	սանձարձակ:	սանձարձակ.
32.	5.	ցայտ:	ցայտ.
40.	6.	ընկնում:	ընկնում—
42.	6.	քանիր	քանի
53.	6.	պահանջ:	պահանջ.
76.	17.	առաջինն,	առաջինն:
77.	10.	այտէս	այտիս
»	12.	ներքևից	ներսևից

ՀՀ Ազգային գրադարան
NL0685858

ԳԻՆՆ Է 30 ԿՈՊ.